# ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ԿԱՌՈՒՑՎՈՂ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՏԱՃԱՐ

Հուլիսի 15-ին Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը այցելեց Երևանում կառուցվող Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Սրբազան Հայրը շինարարության ղեկավարման գրասենյակի պատասխանատու Էդուարդ Պալասանյանի ուղեկցությամբ շրջեց շինհրապարակում, մանրամասն տեղեկություններ ստացավ կատարվող աշխատանքների մասին:

Կաթողիկոսական Տեղապահը, տեղում ծանոթանալով կատարված աշխատանքներին, արտահայտեց իր գոհունակությունը և հույս հայտնեց, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կառուցվող տաճարի շինարարությունն իր լրմանը կարող է հասնել հոբելյանական տարում՝ 2001 թվականի մայիսի կեսերին:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*